ԱՄՍԷ-ԱՄԻՍ

ՖՐԱՆՍԱ

ՓԱՐԻԶԻ ՀԱՑ ԲԺՇԿ. ՄԻՈՒԹԵԱՆ նոր տարեշրջանի առաջին նիստը տեղի ունեցաւ Հոկտեմբեր 21-ին։ Տօքթ. Սալաքեան շահեկան ուսումնասիրութիւն մը կարդաց զիրութեան և ներծորային գեղձերու յաբարերութեանց մասին։ Որոշուեցաւ այս տարի ընկերային հիւանդութիւններու մասին կարդ մը բժշկական հրապարակային դասախօսութիւններ տարբել և շարունակել զրջոյկներու հրատարակութիւնը։ Շուտով լոյս պիտի տեսնեն «Սիֆիլիսը» (Տօքթ. Քօլօլեան և Գրիդորեան), «Մալարիան» (Տօքթ. Կամտարեան և Քօլօլեան) և «Մենդառութիւն» (Տօքթ. Թորդոմեան և Պալասանեան)։

ՖՐԱՆՍԱՑԻ ՀՌԶԱԿԱՒՈՐ ՑԻՄԱՐԲՈՑԺ ՓԻՆԷԼԻ (1845 – 1826) մահուան հարիւրամեակը տօնուեցաւ քանի մը օր առաջ։ Մինչև 18-րդ դարի վերջերը, խենթերը՝ իրը վնասակար և անբաղձալի էակներ, կը բանտարկուէին, կը չղթայուէին և ամէն տեսակ տանջանքի կ'ենթարկուէին։ Փինէլ չղթայազերծ ըրաւ զանոնք և յաջողեցաւ աւելի մարդավայել վերաբերմունք ապահովել անոնց համար։ Իր շնորհիւ է որ այսօր յիմարները իրը հիւանդ կը նկատուին և դարմանուելի կ'ենթարկուին։

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԵԱՆ ԱՃՈՒՄԸ. — Այս տարուայ առաջին կիսին ծնած են 26309 հոգի (անցեալ տարուայ նոյն ժամանակամիջոցին հետ համեմատելով 3012 աւելի), իսկ մեռած են 8459 (անցեալ տարուայ բաղդատմամբ 1025 աւելի)։ Ծնունդները և մահերը դրեթէ նոյն համեմատութեամբ կ'ընթանան, ինչ որ զոհացուցիչ չէ։ Սակայն ընդհանուր առումով 1923-էն ի վեր Հայաստանի աղդաբնակութիւնը կը թուի անընդհատ աճել։

1923-ին յաւելումը ընդհանուր աղդաբնակութեան 0,6 տոկոսը կը կազմէր— 1924-ին՝ 0,8 — 1925-ին՝ 1,4 — 1926-ին՝ 1,5 տոկոսը։

ՎԵՐԱԶԵՐՍ ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ ՄԵՌԱԻ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆԸ, որ յայտնի էր իրբև «Ազրիւր» մանկական առաջին շաբաթաթերթի (1883-էն սկսեալ), և «Տարազ» զրական – հասարակական թերթի (1889-էն) հիմնադիր – հրատարակիչ-խմբագիր։ Անոնց իրբ յաւելուած, երբեմն տարիներ հրատարակած է նաև «Առողջապահական թերթ»-ը որուն շուրջ ժողուած էին Թիֆլիսի բոլոր ծանօթ բժիշկները։

ԱՌՈՂՋ. ԹՈՂՈՎՐԴ. ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ, ստացած է երկու ռէօնթկէնեան զործիքներ, իրենց բոլոր կազմածով։ Ներկայիս Հայաստանի մէջ կան ուրեմն երեք ռէօնթկէնեան հաստատութիւն։

ԶԱՆԱԶԱՆ

ՊԷԼՃԻՐԱԿԱՆ «ԷՕԺԷՆԻԲ» ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ, դիւրութիւն մը ընծայելու համար ժողովուրդին, յատուկ այցելարան մը բացած է փարք Լէօփօլտի դարմանատան մէջ, միայն նախամուսնական բժշկական քննութիւն կատարելու և ամուսնական բժշկական վկայագիր տալու համար։ Իր տեսակին մէջ առաջին հաստատութիւնն է Պէլճիքայի մէջ և Ֆրանսայի մէջ դեռ դոյութիւն չունի։

Le Gérant : L. DELANOY. Imp. de Navarre, 5, r. des Gobelins, Paris.